

Գ Ր Ա Ն Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն.

ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆ. աշխատաս. Սահակ Վարդ. Ամատունի.
Վաղարշապատ 1912 թ. դինը՝ 2 ր.

Յօդուածիս նպատակն է ընդգծել այն շահեկանութիւնը, որ սոյն փորձն ունի յատկապէս բարբառագիտական տեսակէտից ինչպէս իւր դրական, այնպէս և բացասական կողմերով: Այդ տեսակէտը էական նշանակութիւն ունի, նոյնիսկ եթէ ընդունենք, որ բարբառային ձևերն աւելի նուազ են այստեղ, քան զբերելից քաղուած այն ոչ բարբառայինները, որոնք բացակայում են հայկազեան և Առձեռն բառարաններում: Սրա պատճառն այն է, որ հեղինակն ինքը այդ տեսակէտով է իւր գործի հիմքը դրել. օր. յառաջարան—էջ՝ 2.։ Ու մենք երջանկութիւն պիտի ունենայինք այսօր զուտ բարբառագիտական մի լուրջ աշխատութիւն թերթիւ, եթէ Հ. Ամատունին հաւատարիմ մնացած լինէր իւր սկզբընական ծրագրին, այն է զրի առած լինէր միայն «Ժողովրդի, առակլապէս Արարատեան բարբառի բառերը, ոճերը և այլն, Արարատեան բարբառի զուտ ներկայացուցիչ ընդունելով Վաղարշապատ, Օշական, Աշտարակ, Փարպի, Նղուարդ, Քանաքեռ, Նորք և Երեան քաղաքի Զորագեղ և Կոնդ թաղամասերը»։ Եւ Հ. Ամատունին ներկայումս միակն էր, որ կարող էր մի այդպիսի ծրագիր ոչ միայն յղանալ, այլ և իրագործել, քանի որ իւր իսկ մայրենի բարբառի հետ գործ պիտի ունենար, մի բարբառի, որին քաջածանօթ է մանուկ հասակից և որից չի օտարացած ոչ բազմամեայ բացակայութեամբ և ոչ օտար լեզուների ու խօսուածքների ազդեցութեամբ: Այս կարգի մի աշխատութիւն այն ժամանակ միայն գիտական արժէք կ'ունենայ, երբ սրա հիմքը դրուում է մի պարզ, բայց հաստատուն ծրագրի վրայ և անշեղ ի կատար է ածւում:

Սակայն Հ. Ամատունին, հէնց գործի պատրաստութեան ընթացքում, յայտնի չէ ինչ պատճառով, ընդարձակում է իր ծրագիրը՝ խնդրելով իւր կիսապատրաստ հաւաքածուն «Բուլանջի, Մուշի, Ալաշկերտի, Ապարանի, Վանայ, Խոյեցոց, Դարբարդի, Շի-

րակի, Խրիմու, Նոր-Նախիվեանի, Ռշտունեաց, Լոռուայ, Ղազախի, Սիփանի, ախլալակցոց, գանձակեցոց և այլ զաւառարար-բառներէն՝ վերցրուած բառերով, «առնելով տեղացի անձերից և քաղելով ժողովրդական գրուածքներից, նրանց կից բացատրութիւններից ու բառարաններից և արձանագրութիւններից»։ Այսպիսով փոխանակ մի զուտ մասնագիտական գործի, որի արժէքն անգնահատելի պիտի լինէր հայ բարբառագիտութեան համար, հեղինակը մեզ տալիս է մի նոր տեսակի հանրագիտարան, որի մէջ հայ լեզուի գիտութեան բոլոր ճիւղերից աւելի կամ պակաս չափով ցիր ու ցան նմոյշներ կարելի է գտնել։

Այս շեղումը կատարուել է անգիտակցաբար և մի անմեղ նըպատակով, այն է հարստացնել հայ գրականութիւնը «ժողովրդական բառերով ու դարձուածքներով», ինչ աղբիւրից էլ բղխեն վերջիններս։—Դառնանք մեր առաջագրած խնդրին։

Բարբառների ուսումնասիրութեան համար էական նշանակութիւն ունի այն պարզան, թէ արդեօք այն բառերը, դարձուածներն ու օրինակները, որոնք մէջ են բերուած, անձնակամ ծանօթութեան արդիւնք են, ուրիշից լսած, թէ գրքերից քաղուած։ Ներկայ աշխատութեան մէջ գրքերից քաղուածներն յայտնի են. դրանք կրում են սկզբում մի աստղանշան և նրանցից յետոյ էլ աղբիւրը նօսր տառերով նշանակուած է։ Բայց միանգամայն անկարելի է որոշել հեղինակի իրա անձնական օրինակներն և ուրիշներից փոխ առածները։ Օր. էջ՝ 169. «Դու ինձ մի աչքով ես տեսում»։ Ոչ այս նախադասութիւնն իւր ամբողջութեամբ և ոչ այս առթիւ բերուած օրինակները չեն ցոյց տալիս ինչ աղբիւրից վերցրած լինելը։ Եթէ Հ. Ամատունին ոչ միայն զուտ բարբառային բառերին, այլ և ձայնական երևոյթներին կարևորութիւն տուած լինէր, անշուշտ իրա տեղում մինք պիտի գտնէինք տննալ ընդը և թերևս այդ կողմնակի ճանապարհով պիտի կարողանայինք երևան հանել նաև վերոյիշեալ ոճի աղբիւրը։ Զարմանալիս այն է, որ հեղինակն յառաջաբանում, էջ է, կարևոր համարում է յիշատակել թէ «կան և մասնաւոր բառեր, օր. խնջիւք, քսուր ծրար և այլն, որոնց գործածութեան օրինակը դրել ենք մեզներից»։ Բայց ոչ մի միջոց ցոյց չի տալիս զանազանելու այդ կարգի օրինակները միւսներից։

Հ. Ամատունու աշխատանքը ինչքան էլ հարուստ է նիւթերով, պէտք ունի քննադատօրէն ուսումնասիրուելու, այլապէս ցանկալի օգուտը տալ չի կարող. օր. էջ 24, 105, 231, 271, առաջինում՝ «վրին հոգի չկայ, ...», երկրորդում՝ «թէ որ աղաք բլովը կերան, անխելք ան (փոխ. են, սահմ. ներկ. յոգն. 3), թէ

որ չամիչը՝ խելօք ան», երբորդում «թաղման երկրորդ օրը յերնամֆողէք»^{*)}, չորբորդում «խաւողխծիկ», յայտնի չէ ինչ բարբառի պատկանում են. ան-ը յատուկ է անշուշտ Արարատեան բարբառին, բայց մեզ անծանօթ մի ենթաբարբառի, որով էլ աւելի հետաքրքրական է դառնում: Միենոյն նկատողութիւնն աւելի ին-ի համար: Գաւով ինա-ողխնծիկ բառին, որի կողքին կայ նաև Նաւող-Նասցնուր, ներկայացուած է իբրև Արարատեան բառ, ինչ որ սակայն տարակուսելի է թւում ինձ. այլ բան է եթէ գործածութեան տեղը մասնաւորապէս յիշատակուած լինէր. նոյն տարակոյսը չունեմ Նաւող-Նասցնուրի մասին, որովհետև համաձայն է դալիս Արարատեան բարբառի ինձ ծանօթ այն հայկական օրէնքին, որ հետեւեալն է. բառասկզբի խ-ն կ'փոխուի Ն-ի, եթէ նոյն բառի մէջ կայ մի ոյ, օր. խաղ, յաղ^{**)}: Եթէ բերուած բառը, ոճը կամ օրինակը նմանեցնենք մարդկային յատուկ անունների, գործածութեան տեղի անունը նրա ազգանունն է, առանց որի կը մնայ անճանաչելի: Այս անորոշութիւնը, ըստ իս, կը վերացուէր, եթէ գործի վերջում, ինչպէս ընդունուած է գիտական այս կարգի գործերում, կցուած լինէր մի սոսկ բառացուցակ, ուր մուտք գտնէին բառագրքում մուծուած բոլոր բաներն նրանց գործածութեան տեղերի անուններով միասին:

Այդպիսի մի բառացուցակի առաւելութիւններից մէկն էլ այն կը լինէր, որ ուսումնասիրողին դիւրութիւն կ'ընծայէր ձայնական կամ քերականական որեւէ օրէնք ճշտելու համար առանց ժամանակի և ոյժերի դուր սպասման նոր օրինակներ գտնել իրար հետ համեմատելու. օր. էջ 1. ազննալ, սիմի. արծի. ձ. Սահալը աւելացնում է նիլ (նախնեաց) անազանիլ: Զգիւեմ նա ազննալ-ի և անազանիլ-ի միջև որեւէ կապ տեսնում է թէ չէ, բայց ինձ համար անբնական բան չէ ենթադրել, որ ազննալ-ը առաջ եկած լինի մի հնագոյն անազանալ՝ ձևից վանկական գրափոխութեամբ (մէտաթէզ), ինչպէս կարպետ-ը կապետ-ից և կամ, Ակնայ բարբառում ապաճարօնք-ը աճապարանք-ից: Բայց այս ենթադրութիւնը մի անծանօթ բարբառի վերաբերմամբ արժէք կ'ստանար այն ժամանակ, երբ մենք հնար ունենայինք միևնոյն բարբառից համանման բառեր գտնել ու համեմատել:

*) Միենոյն բառը միևնոյն հատուածում հանդէս է բերուած զանազան ձևերով. իզմառնդիկ Ար. չոռի. իզմառնոյ ձրի. բացի. զբանից՝ յիզմառնդիկս Ազգ. Հանգ. Յայտնի չէ նաև սկզբի յ-ն և կարգալ թէ՛ գերմ. յ-ի նման:

**) Իբրև օրինակ բերուած նախադասութիւնից է երևում միայն, որ հեղինակն այդ բառը վերցրել է Գարբ. եղ. ի բառազննութիւնից, բայց զբանով զարմեալ չի պարզում բարբառի հարցը:

Ինչքան էլ որ գիտութիւնը միջոցներ ցոյց տայ ուղղագրական հակասութեանց միջից վերականգնելու արտասանութիւնը, այնու ամենայնիւ բարբառագէտի որոնածը ձայնաբանական ուղղութիւնն է։ Զ. Սահակի աշխատութիւնն այս տեսակէտից չափազանց պակասաւոր է—նախ՝ անհետևողականութեամբ, երկրորդ՝ գրական լեզուի ազդեցութեան ներքոյ։ Հետևողականութիւնը կը պահանջէր յարել կամ բուն արտասանութեան, և կամ համապատասխան գրական ձևին, մինչդեռ, յաճախ միևնոյն էջի վրայ, գտնուած ենք «նփել-թափել» և «էփի-թափի», էջ՝ 184^ա). «էզուց» և «էքուց», 193, «երես» (հանդերձ իւր ածանցներով) 179—181, և «յէլսխն» 305, «քարնհոզի» և «պարիհոքի»։ Իսկ հետևեալ օրինակները, ըստ ուղղագրութեան, պարզապէս գրականացած երևոյթ ունեն, լուսնադիկ, 257, ժուալ, ժուոց, 230, դարձուորել, 161, և այլն։

Տարակուսելի է նաև զուլթանի էշ արտասանութիւնը. աւելի հաւանական է զուլթնի կամ զուլթընի էշ, 152. ինչպէս կարգաւ նտնոռ բառը, էջ՝ 177, նտնօ՞ռ թէ նտնվօռ. միևնոյն բառի մի երկրորդ ձևը—նտոս կարդացուած է, ինչպէս ցոյց է տրուած փակագծում, «ետվոս» (հաւանական նտըվօս), մինչդեռ գրութեան ձևից այդ չի ննթադրուած։

Ինչպէս ուրիշ ոչ մասնագէտների աշխատութեանց մէջ, նոյնպէս և ներկայ գործում ձայնաբանութիւնը մատնուած է բացարձակ անուշադրութեան, որով և բազմաթիւ հետաքրքրական ձևեր պատահականօրէն միայն օրինակների մէջ են հանդէս գալիս, և, այդպիսով ամբողջ գործի առաւելութիւնն էլ, դառնում է օրինակների ճոխութիւնը. օր. իղա—այդ, 325, կաննեց—կանգնեց, 2, տննալ—տննանել և այլն, մինչդեռ նուազ կարևոր ձևեր, ինչպէս էլոց (=այլոց) և՛ դրուած և՛ բացատրուած են։

Ո՞րքան աւելի մեծ պիտի լինէր բառ ու բան—ի ընծայած օգուտը, եթէ հեղինակը, գէթ Արարատեան բառերի, գլխաւոր ձևերը միանգամից յիշատակած լինէր կամ բառաշարքում և կամ օրինակների միջոցով, ինչպէս առհասարակ լինում է նմանօրինակ երկերի մէջ. այդ յիշատակութիւնը կարևոր է մանաւանդ այն պատճառով, որ շատ բառեր զանազան բարբառներում ոչ միայն տարբեր ձևով են հոլովուած կամ խոնարհուած, այլ և ներկայաց-

*) Սոյն էջում եփուած բառի կողքին փակագծի մէջ նկատուած է. «ընչում են էփուած», որից երևում է, որ եփել բառն ևս արտասանուած է եփել. բայց այսպիսի դիտողութեամբ ո՛չ միայն շփոթութիւնը չի վերացուած, այլ և կառկած է առաջ գալիս, թէ մի գուցէ որոշ դէպքում միևնոյն բառը զանազան ձևերով է արտասանուած, ինչ որ նոյնպէս հնարուոր է։

նում են մեզ անսպասելի շեղումներ. օր. էջ՝ 193 «էն գլխէն»-ի (Ար.) փոխարէն սպասելի է տեսնել էն գլխից, որ համաձայն է Արարատեան բարբառի քերականութեան. և կամ էջ՝ 196 էջքծլ (Շիր.) բառի կատարեալ իլ. ա. և գ. դէմքերը մէջ են բերուած շարունակութեան մէջ զետեղուած օրինակներում «(տեղերս) էցքայ» և «(մաթրաթը) էցքեց (գետին)», այնինչ էջքայ-ի դիմաց սպասելի էր էցքաւ, էցքեց-ի դիմաց էլ էցքեցի: Կան, իհարկէ, այնպիսի այլաբարբառ ձևեր, որոնց սկիզբը ոչ մասնագէտի համար դժուար է երևան հանել, ինչպէս կախլած, 205 («Մէլի թառից կախլած կաց» Մոռաց. աշխ. 42): Դժուար թէ այս բառի սկիզբը լինի կախլել, աւելի շուտ կախլած պարզապէս կախ էլած-ի սղումն է: Այսպիսի դէպքերում կարելի էր բառերի շարքում, առանց երկար բացատրութեան, տալ կախլած բառը իւր նշանակութեամբ—կախլած կամ կախուած:

Հ. Ամատունու աշխատութեան մէջ տեղ են տրուած մի շարք օտար, գլխաւորապէս թուրքերէն բառերի, բայց այստեղ ևս բացակայում է հետեւողական մէթոդը: Ըստ այն յայտարարութեան, որ հեղինակն արել է յառաջարանում, մուտք գտած պիտի լինէին միայն երկու կարգի օտար բառեր, 1) այնպիսիները, որոնց համազօրները հայերէնում գոյութիւն չունեն, 2) այնպիսիներ, որոնք բարդուած են որեւէ հայերէն բառի հետ. օր. յառաջարան, էջ՝ Ը: Բայց ահա, էջ 90, ըաշխիշ բառը, որի հայերէնը, նուէր, պարզև և այն, գոյութիւն ունի և ժողովրդին շատ էլ անծանօթ է: Երկրորդ կարգի օրինակներն աւելի լուսարանուած կը լինէին, եթէ բացի բարդ ձևերից առանձին էլ յիշատակուէին, որովհետև նախ իբրև բարդ բառեր են փոխ առնուել, ապա թէ բարդուել որեւէ հայ բառի հետ: Այսպիսի մի լուրջ գործի մէջ օտար բառերի տեսակների մէջ խափր դնելն աւելորդ է, ինչքան էլ բառն արտաբոլւոտ աննշան թուի, պէտք է տեղ տալ այն ընդ որ օտար բառերին, որոնք դանազան ժամանակներում մուտք են գործել հայ ժողովրդի խօսած լեզուի մէջ և պակասում են դրականում. որովհետև բարբառների ձայնական օրէնքների ուսումնասիրութեան համար օտար բառերի մատուցած ծառայութիւնը շատ մեծ է: Հանդուցեալ Հիւրշմանը պարսկերէնից փոխ առնուած հայերէն բառերի միջոցով էր, որ երևան հանեց միջին պարսկերէնի կամ պահլաւերէնի ձայնական օրէնքները: Գալով Հ. Սահակի աշխատութեան՝ այստեղ նոյնպէս զգալի է իւր առաջադրած սկզբունքի պակասութիւնները. օր. էջ՝ 312. «հին ծառերը, որ էլ բար չէին տալի, ...» օրինակից երևում է, որ ըար (հին հայ. ընր) պարսկերէն բառն առանձին գործածուած է, մինչդեռ ոչ այդ

օրինակում, ոչ էլ, էջ 90, ըստ դնել ոճի մէջ չի բացատրուած բառի էական նշանակութիւնը, որ է պտուղ, միրք: Նոյնպէս, էջ 144, կայ «գլխից ոստ (ուղիղը՝ ոսդ) անել», բայց Ուղ ոտանձին չկայ:

Ժիշտ է, այս բոլոր պահանջներին, որոնց միանում են նաև արժանապատիւ հեղինակի կողմնակի ձգտումներն էլ, գործը իւր ըմբռնումով, ըստ կարելոյն ընդարձակօրէն օգտակար դարձնել ու գոնացում տալ եթէ ոչ անկարելի, գէթ շատ դժուար էր: Սակայն լաւ կը լինէր, եթէ այնպիսի բառեր, ինչպէս գուրգուրանք, կազմարար, գեղեցկածին, նոյնիսկ քրկրորդ ծայն, ցկեղեցւոյ (կրթչտական բառ, ակ ձայնի անունը) և այլն գուրս ձգուած լինէին և մնացածը աւելի ևս մշակուած ձևով հանդէս գար: Բառաբան գրելն, ինչպէս ասում էր սոյն գործի քննադատներից մինը, եթէ չեմ սխալուում «չովիտում», առանձին արուեստ է, որին Հ. Սահակն այնքան էլ հմուտ չէ. բայց ինչ որ Հ. Սահակը կարող էր անել, այդ ևս հագիւ թէ ուրիշը կարողանար գլուխ բերել: Հէնց ներկայ աշխատութիւնը արդեօք անօրինակ համբերութեան և եռանդի ապացոյց չ'է մեր ասածին: Թող այդ միևնոյն եռանդը, որ տարիներ ամբողջ անընդհատ թափուել է այս գործի վրայ, նուիրուէր մի քանի տարբեր, միմեանցից անջատ, բայց իրար լրացնող աշխատութեան և հայ բանասիրութիւնը բախտ պիտի ունենար ողջունելու ծաւալով փոքր, բայց աւելի ամփոփ և կանոնաւոր երկի: Հ. Սահակը կարող էր տալ, օրինակ, 1) ձեռագրերից ու արձանագրութիւններից քաղուած բառերի բառարան, 2) գուտ Արարատեան խօսուածքի բառարան, քաղուած բուն իսկ ժողովրդից, և վերջապէս մի բառարան էլ ժողովրդական գրուածքներից կազմուած, մինչ այժմ այս երեք տարբեր գործերը խնդրուած դեռ ուրիշ տարբերով էլ, հիւսուած են ի մի ի մեկ ամէն մէկի:

Եւ սակայն այս բոլորի փոխարէն գործը ունի և անգնահատելի առաւելութիւններ, որոնցից գուցէ գիտութեան ոչ մի ճիւղ այնպէս չօգտուի ինչպէս բարբառագիտութիւնը: Հէնց միայն այն պարագան, որ մօտ 15 հազար բառեր ու ոճեր են ի մի հաւաքուած և մօտ 80 հազար էլ օրինակներ, ինքնին բաւական է վկայելու գործի արժանաւորութեան ու օգտի մասին. իսկ այնպիսի երևոյթ, ինչպիսին է ճիրվնջղ (Շիրակ), լատտ և Շիր. լեփուկ բառերի կողքին դնել Ար. լեստ և լեփուկ, էջ 241—243, և կամ երևան հանել ծին (ծնանիմ բառի արմատը) բառն իր այնքան քաղմաղան իմաստների օրինակներով, էական նշանակութիւն ունի ոչ միայն բարբառագիտական տեսակէտից, այլ և ընդհանուր

հայերէնի պատմութեան համար: Ներկայ աշխատութիւնը հարուստ
 նիւթ է մատակարարում ուսումնասիրելու լեզուական այնպիսի
 կարեւոր երևոյթներ, ինչպիսիք են կրկնութիւնն ու ընակայնա-
 կանութիւնը, մի բան, որ թերեւ պարտական ենք հեղինակի բա-
 նաստեղծական խառնուածքին: Հ. Սահակի գործից ամեն քայլա-
 փոխում պիտի օգտուին ամէն ուրեք գրադուստր եւ միայն հայ
 բարբառագիտութեամբ, այլև առհասարակ հայերէնի ուսումնասի-
 րութեամբ: Աւելին գեռ. նրա այս երկը մեզ միջոց է տալիս, որ
 մեզնից ամէն մէկը սրա վրա լրացնէ իւր բարբառի բառարանը:
 Ոորին հիացումս աշխատանքի ու գրչի այս պատուական
 համեստ ներկայացուցին:

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ.

1913 յունիս 7. Ս. Էջմիածին.

Ոմարգրութեանս ստացած գրքերի մասին տեսնել
 մեր Ընկերութեան ներկայ տարուայ տեղեկագրի մէջ:

